

ԽՈԿՈՒՄՆԵՐՈՎ ԲԵՂՄՆԱԻՈՐ

- 1. Պենտեկոստէ**
- 2. Պիղատոս և Հերովդէս Բարեկամ
Դարձան**
- 3. «Զախջախուած Եղեգը Պիտ Զփշրէ
Ու Պլպլած Պատրոյգը պիտի Զմարէ**
- 4. Սակայն, Զճանչցան Թէ Յիսուսն էր Ան**
- 5. Ստանան Պարտուեցաւ Ի՛ր իսկ
Յաղթանակով**
- 6. Սէ՞ր՝ Թէ Վերջին Դատաստան**

OVERWHELMED WITH OR UNDER CONTEMPLATION

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ԿԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

2009

Պ Ե Ն Տ Ե Կ Ո Ս Տ Է

Պատմական ու աշխարհաստան դէպք մըն է այս, որ մարդկութեան իմացական ու գիտակցական հայեացքի հորիզոնին շնորհեց աննախընթաց թռիչք ու աստուածայայտնիչ տեսութիւն: Անժամանակագրելի կենարար պատահար մըն էր, որով Աստուած կրկին ստեղծագործել սկսաւ ոչ թէ երկրագունտ աշխարհը, այլ՝ *մարդ-աշխարհը*: Վերստեղծելու մարդ արարածը Իր պատկերին նման ոչ թէ մարդ, այլ՝ որպէս հոգեւոր ու կենսաձի՛ր եկեղեցի:

Աստուածային գործունէութիւնը անշջուկ է ու անադմուկ, օդանաւերու և հրթիռներու նման չունի գոտում ու որոտում: Ամպի նման թեթեւաշարժ ու խունկի նման Բնֆուշ է Ան: Սակայն Իր ստեղծող զօրութիւնը ոչ սահման ունի և ոչ ալ ծիրի մը մէջ կ'ամփոփուի: Սբ. Հոգին անմուռն է որովհետեւ Իր յորդորներն ու խորհուրդները լսելի են միայն անոնց, որոնք ուխտաւորներն են անձնուրացութեան ու հաւատարիմները սիրոյ միաբանութեան:

Հոգեգալուստը ցնորական և ծայրայեղ մոլեռանդութեան տեսութիւն մը կամ փորձառութիւն մը չէ՛: Պենտեկոստէն աստուածային այն բոցավառ խարոյկն է որ երկինքէն իջաւ խանդավառելու, հաւատարիմ և ուխտաւոր միաբանութիւնը, որ հաւաքուած էր աղօթելու և փառաբանելու զԱստուած: Սբ. Հոգւոյն յեղումը չյայտնուեցաւ ներկաները այրելու և կորսնցնելու, այլ՝ սրբագործելու, ֆաջալերելու և սրտապնդելու զանոնք:

Սբ. Հոգին ոչ միայն սաւառնեցաւ աջակերտաց վրայ որպէս ուրուական մը, այլ անոնց ամբողջականութեան և կեանքի փորձառութեան ամենօրեայ ապրո՛ւմը դարձաւ: Սբ. Հոգին՝ սիրոյ միաբան ուխտաւորներուն, եղաւ կենակից ու լծակից իրենց առաքելութեան ու կեանքի բոլոր հանգամանքներուն և հանգրուաններուն:

Ազգայնամուլ, նեղմիտ և կարճատես աջակերտներուն հայեացքը, Պենտեկոստէն փոխակերպեց և ըրաւ համաշխարհային ու անոնց տեսանելիութեան ու խորհողութեան հորիզոնը ընդգրկեց բոլոր ազգերը, լեզուները և ժողովուրդները: Այս նոր ըմբռնումի և գիտակցութեան ակնադբիւրին, Պօղոս Առաքեալ մօտեցաւ որպէս ռահվիրա և հաւատաւոր:

Պենտեկոստէն այն կնիքն ու դրոշմն էր որ անհունապէս Հեռաւոր Անտեսանելին՝ երկրաւոր ու հողեղէն մարմնաւորին ըրաւ տեսանելի, մերձաւոր և լսելի: Այս աննկարագրելի և աննախընթաց դէպք իրականութիւնը, (Զօրութիւնը) փոխակերպեց տասնեակ մը հեք

ձկնորս պարզամիտները, որոնք աշխարհը յեղաշրջեցին, ֆաղափա-
կրթութիւնները տապալեցին և բռնատէրերը ծունկի բերին:
Հողեղէն ու կաւեղէն ամ մը սիրոյ միաբանութեան ուխտաւորները
վերածուեցան հոգեղենի ու դարձան շողարձակ, առինձնող՝ խղճա-
հարող ու ապաշխարանքի առաջնորդող տիտաններ:

Վերնատան մէջ 120 միաբան աղօթողները, Սուրբ Հոգի
արտադրելու համար չէին հաւաքուած: Վերոյիջեալները հաւաքուած
էին ընտրելու 12-րդ աշակերտ մը իրենց համրանքին՝ որովհետեւ
մատնիչ Յուդան անձնասպան եղած էր: Մոյն հաւաքը նաեւ կը
տօնէր յաղթանակը իրենց Տիրոջ Յիսուսի, որ ոչ միայն տապալած ու
նուաճած էր մահուան գօրութիւնը, այլ՝ փառապանծ դափնեպսակով
համբարձած էր երկինք յաղթահարելով նաեւ ձգողական ուժը:
Աշակերտները հաւաքուած էին վերնատան մէջ, սիրոյ փառափա-
նանք մատուցանելու Աստուծոյ:

Թէեւ աշակերտներուն սիրոյ միաբանական աղօթքը իր դերը
ունեցաւ Պենտեկոստէին, սակայն Հոգեգալուստը աստուածային
ջնորհ մը և յաւելեալ պարգեւ մը ճանչցուելու է հաւատացեալներու
կողմէ:

Պենտեկոստէի *դերն* ու ներգործութիւնը աշակերտներուն
կենցաղավարութեան և առաքելութեան մէջ, դարձաւ անյրաժեշտ
գօրութիւն մը, որ անուրանալի է: Մէկ նախադասութեանք՝ աշա-
կերտները փոխակերպուեցան ***առաքեալներու***, կրաւորականը դար-
ձաւ ներգործական: Առաքեալները ոչ թէ *ազգային* և Հրէական
թագաւորութեան սպասաւորները եղան, այլ՝ աստուածային
թագաւորութեան մշակներն ու նուիրեալները: Աշակերտները
դարձան տեսանողները և ճարտարապետները նոր իրաւակարգի,
Յիսուսի՝ եկեղեցիին, ուր եղբայրութիւնն ու անձնագոհութիւնը
պիտի գործէ և մարդկութիւնը պիտի տեսնէ ու հաւատայ Աստուած
ճշմարիտին:

Յիսուսի ցոյց տուած մեծագոյն հակադրութիւնը որ երբեք
դիմագրաւուած էր Հռովմի բռնասիրական մտայնութիւնը, Սիրոյ
Վարդապետին յայտնաբերած ցաւի ու տառապանքի երկունքով
ստեղծագործելու և ծննդագործելու մեթոտն էր: Հեթանոս աշխարհ
իր հաւատքին կրուանը ըրած էր ***սուրն ու նիզակը***, իսկ Յիսուս,
Իր առաքեալներուն միջոցաւ, պարգեց ***սիրոյ ու կարեկցութեան
դրօշը***-անյիշաչարութեան ու ներողամտութեան ոգին և անսպառ
գուրգուրանքի վեհութիւնը:

Ներկայ թուականի առաջին դարը իր մայրամուտը չկոխած՝
Պենտեկոստէի հրայրքը հմայած էր Հռոմ և Պարսիկ Կայսրութեան

ծարաւ ժողովուրդներու քաղցր: Հոռմի Կայսեր մոլեգնութիւնն ու ամենի վայրագութիւնը, թէեւ ջարդեց հազարաւոր հաւատացեալներ որոնք փորձառութիւնը ունեցած էին սրբագործող Ա. Հոգիին, ի վերջոյ սոյն անպարտելի կարծուած կայսրութիւնը և անոր ոյժը ծնրադրեց հաւատացեալներու աննուաճելի սիրոյն առջեւ և որդեգրեց Յիսուսն ու Անոր խաչը որպէս իրեն դրօշ: Հայաստանի թագաւոր Տրդատ Գ. եղաւ ախոյեան պետականացնելով Քրիստոնէական կրօնքն ու Անոր դաստիարակութիւնը Յ. Տ. ՅՕ1-ին:

Շատ արդարացի է, հարց տալ, թէ ո՞ւր է Հոգեգալուստի գօրոյթը և գործունէութիւնը նաեւ այսօր: Սուրբ Հոգւոյն ներգործող ոյժը, անմոռնչ է, ուստի Ան կը գործէ նման թթիւմորի: Բանինե՞ր կրնան լսել թթիւմորի ներագդեցութիւնը հացի պատրաստութեան մէջ: Ա. Հոգին տարածուած է աշխարհի ընդհանուր մարդկութեան *մտածումին* մէջ և կ'ուզէ գործել: Իր պայմանը սեր և միաբանութիւն է: Եթէ Քրիստոսի Եկեղեցին կ'ուզէ տեսնել Ա.Հոգին գործօ՞ն դերի մէջ, պէտք է ան ուրանայ անձնասիրութիւնը և սիրէ միաբանութիւնը: Ներկայ իրաւացի հարցումը ուղելու չէ Սուրբ Հոգիին, այլ՝ ուղելու է անուանական ու փառատե՛նչ Քրիստոնէաներուն, մանաւանդ բոլո՛ր Հայաստանեայց Եկեղեցիներուն,

«Ո՞ւր է մեր սէրն ու մեր միաբանութիւնը»:

Մայիս 23, 1988

Թորոնթօ

ՊԻՂԱՏՈՍ ԵՎ ՅԵՐՈՎԴԵՍ... ԲԱՐԵԿԱՄ ԴԱՐՁԱՆ

Փարիսեցիք ու սադուկեցիք՝ երկու ազգակրօն և ցեղամոլ կուսակցականներ միացան, դաւաճանելու համար Յիսուս Քրիստոսի դէմ: Արեւմուտքի՝ Հռոմէական Կայսրութեան ներկայացուցիչ Պիղատոս և Արեւելքի փառատենչ Հերովդէս թագաւորը, իրենց փառքի և տիրակալութեան աթոռները չխախտելու համար, խաչի անարգ մահուան լքեցին Արդարն ու գրկեալներու Պաշտան Յիսուսը:

Անգուսպ խուժանը, այր ու կին, արբեցած ազատատենչութեան կեղծ դիմակին ներքեւ, կաշառուած ու գինովցած արծաթ ու պղինձ դրամներու սատանայական հնչիւնէն, Բուէարկեցին վայրագ Բարաք-բայի ազատութիւնը ու բիրտ ձեռքերու անձնատուր ըրին ա՛յն Ձեռքերը, որոնք օրհնած էին մանուկները, լուսաւորած կոյրերու աչքերը, մաքրած բորոտներու նեխած մարմինները, կերակրած 5 և 4 հազար անօթիները, և յարութիւն տուած մեռեալներուն մխիթարելով անոնց սգաւոր սիրելիները:

Անհատներու ու նաեւ պետութիւններու դաւադիր ու շահամոլ կեցուածքը միայն անցեալի անգրագէտ դարերու չի պատկանիր: Այսօր ալ կը բանին աշխատանոց զինարանները, կը գործեն դաւերն ու նենգութիւնները ու կը դատապարտուին և կը մահանան իրաւունքը, արդարութիւնը և ճշմարտութիւնը: Արդի պետութիւններու համար ընդունուած է ծայրայեղ բռնութիւն, խաբէբայութիւն, սպաննութիւն և դաւաճանութիւն:

Միջազգային դրամական դաւերու բազինին վրայ ողջակիզուած է Քրիստոնէութիւնը նաեւ այսօր: Համաշխարհային դաւադրութիւն մը կայ, որուն նպատակն է բնաջնջել Քրիստոնէական հաւատքը, աստուածադիր առաքիւնութիւնները և սրբութիւնները: Քրիստոնէայ հաւատացեալ մը տրամագծօրէն ու հարկադրաբար թշնամի կը սեպուի այս աշխարհի իշխան Սատանային: Աշխարհ կը դիտէ քրիստոնէան որպէս դաւաճան մը իր Բաղաճացիութեան ու կեղծ Բաղաճակրթութեան:

Քրիստոնէայ ճանչցուած ազգերու արուեստագէտներ իրենց կեանքով ու գիտարուեստով յաճախ կը դաւաճանեն իրենց ներքողած իտէալը: Թատերական ու երաժշտական արուեստի ներկայացումները կ'իրագործուին, յաճախ, ի շահ հոգեկան մոլորու-

թիւններու և պիղծ մարմնապաշտական ելոյթներու, ուր կը փառաբանուի անբարոյ հեշտութիւնը: Արուեստի նրբութիւնը, ճաշակի գերակայութիւնը, մտփ ճարտարութիւնը և գեղեցիկի արտայայտութիւնը դարձած են պատմութիւն և թանգարանային նմոյշ: Կարգ մը գոեհիկ երեւոյթներ, "արուեստ" բառով յարգելութեան պատմուճան կ'ուզեն հագուիլ:

Հեռատեսիլի "Fashion" չաստուածուհիներու ցուցադրութեամբ, կը բեմադրուի ո՛չ թէ նորոյթ դարձած զգեստաւորումները, այլ իզական մարմնի զգեստաւորուելիք *անձաձկոյթ* մասերը:

Գիտութեան, ազատութեան և արդարութեան օրրան կարծուած Ֆրանսա 1994-ին օրինաւոր ճանչցաւ միասեռական ամուսնութիւնը...: Երանի գիտնային իրենց հոգեվիճակին ամօթանքը: Հրապարակային ամօթի դէմ միայն Զրիստոնէութիւնը կրնայ կանգնիլ: Ամօթի և ամչնալու զգացումը միայն մարդ արարածին տրուած է:

Ամերիկայի մէջ թէեւ կան զանազան ֆաղափական կուսակցութիւններ, սակայն կայ միայն *մէ՛կ լրագրական աշխատակցութիւն*, որ անաստուած է ու հակակրօն: Պատեհապաշտ լրատու գործակալութիւնը շարունակ կը հրատարկէ ու կը ձայնասփռէ եկեղեցականի մը անվայել վարմունքը: Այս ըսել չէ՝ որ սխալ մը պէտք է ծածկուի կամ կրօնաւորի մը անբարոյ կենցաղավարութիւնը անպատիժ մնալու է:

Սակայն... :

Զանի՞ բարոյագուրկ ֆաղափականութեան անբարոյ ըմբռնումներ և գործադրումներ կը հրատարակուին, որոնք բարոյագուրկ չարաշահութեամբ կը սարքուին թշուառացման մեծ սեղաններ: Բարոյական կեանքը կը ծաղկի կրօնակա՛ն հողի վրայ, *մարդկային կեանքը* հակադրուած կենդանականին, կը կանգնի բարոյակա՛ն օրէնքներու վրայ:

Ինչո՞ւ չեն հրատարակուիր երեսփոխաններու ու նախարարներու կեղծիքը, չարաշահութիւնը և անբարոյականութիւնը, որոնք ուղղակի արուեստի վերածուած են: Ճշմարիտէն աւելի կը տիրէ *ճշմարտանմանը*: ուր կը հետապնդուի ֆաղափական և անբարոյական նպատակը:

Աշխարհագոր պետութիւններու կեանքը սնանկ է ու վաղանցուկ առանց հոգեւոր ու բարոյական վեհ արժէքներու: Մարդկային կեանքին մեծագոյն թշնամին անխուսափելի մահը չէ՛, այլ բարոյաբանդ անաստուածութիւնը:

Աստուածաբաններ կը հետաքրքրուին Աստուածաշունչի *գրա-*

կանութեան վերաբերող հարցերով և հեղինակներով, ո՛չ Աստուածաշունչի **պատգամովը**: Յիսուս Զրիստոս Ինֆզիմֆ կը կրչէ "Աստուծոյ Խօսքը" ո՛չ թէ որպէս *գրութիւն մը*, այլ իմաստաւորո՞ղ Մեկնաբանութիւնը: Ոչ թէ ո՞վ գրած է Ս. Գիրքը, այլ ո՞վ յայտնաբանած է զԱստուած:

***Յիսուս ատրեցաւ որպէս կենդանի
Աստուածայայտնութիւն և հայելացումը
Աէք Աստուծոյ:***

**Փետրուար 24, 1997
Թորոնթօ**

“ԶԱՄԱՋԱՌՈՒԱԾ ԵՂԵԳԸ ՊԻՏԻ ՉՓՇՐԷ ՈՒ ՊԼՊԼԱԾ ՊԱՏՐՈՅԳԸ ՊԻՏԻ ՉՄԱՐԷ”

Մատթ. ԺԲ.20

Մարդկային մտքին և ըմբռնումին անհասանելի, Աստուածա-
յայտնութիւնը, Յիսուս Քրիստոսի Մարդեղութեամբ փորձառական
գիտակցութիւն դարձաւ:

Մարդ գիտակից էր իր բարոյական սկարութեան և մեղան-
չումին, հետեւաբար ինքզինք ենթարկած էր մարմնի շարունակական
չարչարաններու և ուխտագնացութիւններու: Մարդ՝ իր հոգեկան և
բարոյական ֆաւութիւնը, իր մարմինը տանջելով կը փորձէր ձեռք
բերել կամ զԱստուած հաճեցնել:

Այն դարաշրջանին երբ Աստուածնորդին յայտնուեցաւ, աշխար-
հի կրօնները իրարու հետ մրցման մէջ էին համոզելու ժողո-
վուրդները, որ խստակրօնութեամբ և խստակեցութեամբ միայն
կարելի է ֆաւել իրենց մեղքերը և փրկել իրենք՝ զիրենք
խղճահարութենէ և հոգեկան տուայտանքէ:

Մարդ-արարածին մտային դիրքորոշումն ու հասկացողու-
թիւնը ցարդ նոյնն է: Վաղ դարերէ ի վեր, ան իր մարմինը
նուածելով և յաղթահարելով կը յուսայ հասնիլ հոգեկան
փրկութեան և խղճի անդորրութեան: Ան կը փոխէ իր անդամակ-
ցութիւնը մէկ եկեղեցիէ տարբեր եկեղեցիի, մէկ յարանուանութենէ
ուրիշ յարանուանութեան: Կուրանայ իր մանկական սուրբ
մկրտութիւնը որդեգրելով չափահասութեան *երկրորդ* մկրտութիւն
մը եւս: Հանդերձի ձեւերը կը փոխուին, մարմնի այս կամ այն
մասը ծածկուած ըլլալ կը պարտադրուի: Աղօթքի պահուն կիներ
իրենց գլուխը կը ծածկեն: Կարգ մը ծայրայեղներ իրենք զիրենք
կը թլփատեն կամ կը ներքինեացնեն:

Այս բոլոր աւելորդ արարողութիւններն ու ձեւակերպութիւն-
ները տեղի կ'ունենան *մարմինի* համար, մարմինը հաճեցնելու կամ
մարմինը պատժելու համար:

Հոգետես Աւետարանագիրերու սրտայոյզ Գրականութեան մէջ,
այսպէս կը կարդանք Յիսուսի մասին, թէ երբ Ան տեսաւ
ժողովուրդները բարոյական նախապաշարումի ու մարմնական ցաւի
ու տառապանքի մէջ, **“խղճաց անոնց”**: Յիսուս *ցաւակից* եղաւ
մարդկային տառապանքին ու անոր հոգեկան կսկիծին: Յիսուս
ջանաց ժողովուրդներուն նախապաշարումը և սխալ համոզումները

ուղղել և բարօժել: Այս պատճառաւ՝ Իր ապրումէն հորիզոն մը բացաւ մարդու ճանաչողութեան և կերտեց մտքի և հոգիի երկնատեսիլ անկիւնադարձը:

Յիսուս, մարդկային ըմբռնումին մէջ անստուեր Լոյս մը ծագեցաւ արշալոյսի պէս Բնֆուշ և ըսաւ, *“Ինչ որ բերնէն կ’ելլէ՝ սրտէ՛ն է որ կրա՛ գայ, և ա՛ն է որ կը պղծէ՛ մարդս, քանի որ սրտէ՛ն է որ կ’ելլեն չար խորհուրդներ”* --Մատթ.Ժե.17: Յիսուս Բժիշկ ու Փրկիչ է ոչ միայն մարմնի, այլ՝ մարդկային խորհուրդներուն և խորհրդածութիւններուն ալ: Մարդու ներքնագոյն «ես»ին և անոր անչափելի շարժառիթներուն Լուսաւորի՛չը:

Մարդկային մտքի հասողութիւնը մարմնաւոր է և սահմանաւորեալ, իսկ Յիսուսի հոգեկա՛ն ներթափանցումը, մարդկային հարցասէր մտքին, անսահման է և Բաղցրահայեաց: Այս պատճառաւ երբ Յիսուսի բերին անդամալոյծ մը, Ան, նախ ըսաւ.

“Որդեակ, բու մեղքերդ ներուած են քեզի”,
և յետոյ՝ ըսաւ. ***“վերցու՛ր մահիծդ ու քալէ”:***

Աստուածային և մարդկային մօտեցումի հիմնական տարբերութիւնը, սա է: Մարդ, նախապաշարումով և շահախնդրութեամբ կը մօտենայ ջախջախուած եղեքի մը (մեղաւոր անձի մը), *ի՛ր* յարանուանութեան համար, *ի՛ր* կազմակերպութեան համար, *ի՛ր* կուսակցութեան և *ի՛ր* եկեղեցիին համար: Իսկ Յիսուս կը մօտենայ այդ պլպլացող պատրոյգին (հոգեկան արկածեալին) որովհետեւ կը *սիրէ՛* զայն: Այդ պատրոյգին, նոյնիսկ պլպլացումը անոր, աստուածային մասնիկ ըլլալը կ’ապացուցանէ: Այդ ջախջախուած եղեգին մէ՛ջ իսկ՝ Յիսուս կը տեսնէ կեանք, կը տեսնէ հաւատք հոգ չէ որ այդ հաւատքը ըլլայ մանանեխի նման փոքր:

Յիսուս կը տեսնէ խորտակուած եղեգ մը, խաչուած Իր աջ կողմը: Այդ ջախջախուած, անօգուտ ու կորուստի դատապարտուած եղեգին մէջ, Յիսուս կը տեսնէ հաւատք,

“Տէր յիշէ՛ զիս երբ բու թագաւորութեամբդ գաս”:

Ոչ թէ հաւատք ըստ եկեղեցական կանոնի կամ հաւատամքի, այլ ջախջախուած հաւատք: Հաւատք մը, որ կարգ մը կրօնաւորներու համար, յուսահատական է, անարժէք և մեռած: Իսկ Յիսուս, այդ ջախջախուած և պլպլացող հաւա՛տքը, նոյնիսկ որպէս ազատ վճարագիր, կ’արժէւորէ: Յիսուսի խանդակաթ սրտէն կը բխին.

“Զաջալերուէ՛ աղջիկս, կամ ո՛րդիս”

Ով անմխիթար հոգի, եթէ ինքզինքդ կը կարծես ըլլալ ջախջախուած եղեգ մը, կամ պլպլացող պատրոյգ մը միայն, մի յուսահատիր, նայէ՛ ու լսէ՛ Յիսուսի խօսքերը:

Յիսուս կը մօտենայ այդ ջախջախուած եղեգին ոչ թէ անդամագրելու զայն և ոչ ալ անդամատուրք պահանջելու անկէ: Յիսուս՝ ի յաւիտենից եղած է անսպառ Տուող ու ոչ պահանջատէր: Աստուածայինին ու մարդկայինին տարբերութիւնը բացայայտ է: Աստուած՝ ***տալով*** հաճոյք կը զգայ, իսկ մարդ ***ստանալով*** և ամբարելով:

***Մարդ ա՛յն ատեն պիտի ըլլայ Աստուածանման
երբ ի՛նք եւս իր կարգին, պիտի սկսի
տալ նման Աստուծոյ.***

Յունուար 13, 1987

Թորոնթօ

ՍԱԿԱՅՆ, ՉՃԱՆՉՑԱՆ ԹԷ ՅԻՍՈՂԻՍՆ ԷՐ ԱՆ

Մագդաղենացին՝ որ տաղտկալի վարձկան դպիրներու շրջանակէն դուրս գտած էր ներում շնորհող Մարդասէր և կեանք բաշխող Աստուածորդին, Յարութեան գերապայծառ առաւօտուն, գերեզմանի շուշաններուն մէջ, չճանչցաւ Յիսուսը:

Էմմաուսի ճամբուն վրայ երկու աշակերտներ որոնք մասնակցած էին հինգ հազարի հացկերոյթին, որ սպասարկուած էր երկնային հրեշտակներու, միջոցաւ, չճանչցան թէ իրենց հետ քալող այդ Օտարականը՝ Յիսուսն էր, Կեանքի՛ չացը և Միրո՛յ Վարդապետը: Յարութեան յուսադրիչ յարթանակէն յետոյ՝ եօթը աշակերտներ, մէջն ըլլալով Պետրոս, չճանչցան որ Կափառնայումի լճակին մօտ կեցած մարդու կերպարանքը Յիսուս ինքն էր:

Յայտնագործումի այս առանձնաշնորհը Յիսուս միայն Իր աշակերտներուն չվերապահեց, այլ՝ տակաւին Ան կը շարունակէ՝ Ինքզինք յայտնել մարդկութեան՝ քսան դարեր շարունակ: Յիսուս կ'ուզէ յայտնուիլ Եկեղեցիին ու կղերականին, բանուորին և աշխարհականին, մտաւորականին և շինականին անխտիր:

Վերջին ճաշկերոյթն է այս, որ Յիսուս պիտի սարքէ Իր եօթը աշակերտներուն ծովեզերքը, աւագին վրայ: Այն լիճին եզերքէն ուր զանոնք կանչած էր մօտ երեք տարիներ առաջ, դրկելու զանոնք ծովաշխարհ մը ուր փոխանակ ձուկեր որսալու պիտի որսային մոլորածները և կեանքի արկածեալները, և փոխանակ իրենց որսացածը մահացնելու՝ պիտի ապրեցնէին: Գալիլիոյ ծովուն ալիքները որ զիրենք վախցուցած և սարսափեցուցած էին՝ աշխարհածովի ալիքները (զրկանքն ու նահատակութիւնը) զիրենք պիտի սրտապընդեն ու քաջալերեն: Կեսարներու և հզօրներու սպառնալիքները զիրենք այլեւս պիտի չզարհուրեցնեն և ոչ ալ տկարացնեն: Որովհետեւ այլեւս միայն մարդ չեն, այլ՝ մարդ և առաւել չոգի: Պենտեկոստէի օրուան մկրտութիւնը զիրենք դարձուցած էր մարմնեղենէ հոգեղէն և աստուածային: Այս հացկերոյթէն յետոյ, Յիսուս փոխանակ ըլլալու իրենց *հետ*, պիտի ըլլայ իրենց *մէջ*:

Յիսուս կը յայտնէ Ինքզինքը հացկերոյթի մը տեւողութեան կամ Կանայի հարսանիքի մը ընթացքին: Մարմնական և նիւթական տօնախմբութեան մը առթիւ: Կարծես՝ ինքնայայտնութիւնը անձնագրութեամբ կ'ըլլայ: Ինքզինքը նուիրելով, փշրելով և ուրիշներու բաժնելով անձ մը կը կարողանայ իր ինքնութիւնը յայտնագործել:

Միթե նոյնը չե՞ն ըրած նաև մեր ծնողներէն շատեր: Իրենք չեն կերած որպէսզի ուրիշներ չանօթենան: Իրենք զիրենք զրկած են որ ուրիշներ ազատ ապրին: Իրենց այս անձնուրացութեամբ սիրաշահած են սիրտերը իրենց հարազատներուն և նաև հոգիները բոլոր անոնց, որ կեանքի ճանապարհին մէջ իրենց հանդիպած են:

Մեր Տիրոջը Խաչելութենէն առաջ՝ Յիսուս միայն մէկ տեղ կրնար գտնուիլ նոյն ժամուն, իսկ Յարութենէն վերջ, Յիսուս ամէն տեղ է միեւնոյն ժամուն: Ոչ թէ Յիսուս Ինքզինք կը ծածկէ մեզմէ, այլ՝ մե՛նք ենք որ Ձինք չենք տեսներ: Մե՛նք Ձինք չենք կրնար տեսնել ու Ձինք չենք ճանչնար, որովհետև մեր սպասումը և ակնկալութիւնը *տարբեր Յիսուս* մը տեսնել է:

Մենք տեսնել կ'ուզենք ազգայի՛ն Յիսուս մը, քաղաքակա՛ն Յիսուս մը, յարանուանակա՛ն Յիսուս մը, Յիսուս մը մե՛ր նախապաշարումի կերպարանովը, մե՛ր տեսանկիւնի շրջանակին յարմարող Յիսուս մը: Յիսուս մը որ նմանի մե՛ր երազին ու ակնկալութեան , փոխանակ մե՛նք նմանելու Ի՛ր Կերպարին և Ի՛ր Նմանութեան:

Որքան ժամանակ որ մենք անձնասիրական Յիսուս մը կը փափաքինք տեսնել կամ ունենալ՝ ճշմարիտը, իրականը և Յարուցեալը պիտի չճանչնանք: Նախ քան տեսնելնիս մեռելներէն Յարուցեալը, Մենք կարիքը ունինք յառնելու մե՛ր նախապաշարումներէն: Աստուծոյ Թագաւորութիւնը Նիկոթիմոսի նման, տեսնելու համար պարտաւոր ենք "Նորէ՛ն ծնանիլ": Յիսուս, հետաքրքիր միտքեր գոհացնելու նպատակաւ Ինքզինք չյայտնեց, այլ՝ Իր դիտաւորութիւնն էր *առաջեալ նե՛ր և վկանե՛ր* ուղարկել մարդաշխարհ: Իր Աւետարանին դեսպաններ և պատուիրակներ դրկելու դիտումով Յիսուս յայտնուեցաւ Ձինք սիրողներուն: Կամաւորներ և անձնուրաց կտրիճները տեսան Ձինքը: Իսկ քահանայապետներ, քաջ ու վատասիրտ վախկոտներ, Պիղատոսներու և դպիրներու նման, պիտի տեսնեն Ձինք, միայն Դատաստանին Օրը: Յիսուսը տեսնելու համար պարտաւոր չես ճգնաւոր կամ վանական ըլլալ: Կամ առանձնանալով և անջատուելով մարդկային ընկերութենէն՝ ապրիլ մենակեաց:

Յիսուս է բուն *հացկերոյթը*, մարդկային իրական կեանքն է Ան: Մեր *առօրեայ* ապրումի՛ն մէջն է, որ պիտի տեսնենք Ձինքը: Ինչպէս Մագդաղենացին իր սուգին մէջ, իր հոգեկան տագնապին և յուսահատութեան մէջ տեսաւ Յիսուսը: Կղեովպաս և իր ընկերը ճամբորդութեան մը մէ՛ջ տեսան Յարուցեալը: Պետրոս և իր վեց ընկերները՝ ձկնորսութեա՛ն մը ընթացքին, իրենց առօրեայ գործին

մէջ, իրենց արհեստի գործունէութեան ընթացքի՛ն տեսան և ճանչցան վերակենդանացած Յիսուսը, իրենց սիրած Տէրը:

Իսկ մենք՝ կեանքի ճանապարհի՛ն վրայ, ճամբորդներուն աղմուկին, գետնի փոշիին, քրտինքի և մարմնական յոգնութեան մէջ պիտի կրնանք տեսնել Անպարտելին:

Մարդկային փորձառութեան ամենէն անսպասելի պահուն և տեղուոյն մէջ կարելի է տեսնել և ճանչնալ Յիսուսը: Այս է աստուածային հրաշք կոչուածը և Մֆանչելիին արժէքը: Երբ մեր հաւատքի աչքերը ետ դարձնենք ու դիտենք մեր կեանքը, հո՛ն պիտի նշմարենք Յիսուսի Կերպարանքը որ եկած է Ինքզինք մեզի յայտնելու: Հո՛ն մեր կեանքի բազմախաչ ճանապարհին վրայ Բանի՛ Բանի՛ անգամներ հանդիպած ենք Ասոր: Սակայն մենք կարծած ենք Ձինք որպէս պարտիզպան, կահագործ կամ ճամբորդող օտարական մը: Իրեն հետ չենք խօսած, Իրեն հարցումներ չենք ուղղած: Ուզած ենք անտեսել խոյս տալ Իր ընկերակցութենէն: Յիսուսը մեր բնակարաններէն ներս չենք ընդունած որովհետեւ օտարական մը, անծանօթ մը կարծած ենք զԱյն: Միջոտ օտարական մը սեպած ենք, ու այսպէսով ոչ ճանչցած ենք Ձինք և ոչ ալ գիտցած մեր Յարուցեալ Տէրը: Ժամադրուած ենք Իր հետ, միայն ժամ մը, Կիրակիէ Կիրակի եկեղեցիէ ներս:

Գալով մեր առօրեայ առեւտրական պղտոր գործունէութիւններուն մէջ, չենք համարձակած Ձինք հրաւիրել մեր գրասենեակները: Ձենք ուզած տեսնել Ձինք մեր գործերուն և հաշիւներուն մէջ, մեր առեւտուրին և շահամուլութեան մէջ ու մեր կեղծաւորութեան և ազահութեան մէջ: Որովհետեւ դրամի և սատանայի կրկնանքի "կը փոխենք աղֆատներու համբերութիւնը, կոյսերուն գեղեցկութիւնը և գերիներուն քրտինքը":

Ձենք ուզած անսալ Վարդապետին ձայնին որ մեզի թելադրութիւն ընէ թէ ո՞ւր պէտք է նետել մեր ուռկանները: Մենք աւելի՛ լաւը գիտենք, մենք արուեստագէտ վաճառական ձկնորսներ կը համարենք մենք զմեզ ու պէտք չենք զգար անսալ ծովեզերքը կեցող Անծանօթի յորդորանքին:

Ահա այս պատճառաւ շատեր, թէեւ տեսած են Յիսուսը սակայն չեն ճանչցած Ձինքը: Ձեն կրցած ճանչնալ Յիսուսը իրենց տեսած դրացիին, ճամբորդին, օտարագգիին և կարօտեալին մէջ որ գորովագութ հայեացքով իրենց նայած է ոչ թէ բան մը *տննելու* ակնկալութեամբ, այլ՝ Կեանքի Հացը և Անմահութեան Զուրը *տալու* իրենց:

Մարտ 31, 1987--Թորոնթօ

ՍԱՏԱՆԱՆ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ ԻՐ ԻՍԿ ՅԱՂԹԱՆԱԿՈՎ

Մուրճի հարուած մը ուժգին և անգութ, երկրորդ հարուած մը աջ ափին աւելի սարսուզդեցիկ, կարծես թէ չարը ամէն ճիգ թափած էր ամուլ և անօգուտ դարձնել այն բուժարար Ձեռքերը, որոնք լուսաւորած էին կոյրերուն աչքերը, կենդանացուցած բորոտներու նեխած մարմինները և յարուցած վաղահաս մեռեալները: Վերջապէս իջան երկու սարսափելի հարուածները վերջին, որոնք գամով ամրացուցին անմեղ Դատապարտեալին յոգնած Մարմինը կոշտ խաչափայտին վրայ:

Վախճանական հարուածը երեք գամերուն, զգացուեցան երբ բիրտ ու կոպիտ բազուկներ բարձրացուցին խաչը և իջեցուցին զայն փորուածփի մը մէջ: Ցաւը շատ տառապալի էր ու հարուածները անագորոյն: Կեղծ բարեպաշտներու կատաղի նախանձի խօսքերը շանթի հարուածներու նման մխուեցան Մարմնացեալ սիրոյ Սրտին մէջ, սակայն Անոր գոյնը չնետեց: Ոչ հարուածները և ոչ ալ խայթող սուտերը կրցան թափանցել Անոր Սիրտը ու լեցնել Ջայն ասելութեամբ ու վրէժխնդրութեամբ:

Այրող հարուածները և ամենադառն ցաւերը երկուքի բաժնեցին դարերու պատմութիւնը: Անոր դէմ ուղղուած սուտ վկայութիւններու, հայհոյանքներու և սպառնալիքներու տարափին ընդամէջէն լսուեցաւ սուրբ սիրոյ, գերմարդկային և աննախընթաց երաժշտութիւն մը.

«Հա՛յր թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն»,
գերմարդկային բառեր:

Անշրպետը լսած էր շատ մը որոտումներ, հրաբխային պայթումներ և երկրաշարժներ: Իմացած էր նաեւ սրբազան համերգներ հրեշտակներու ջրթներէն, սակայն չէր զգացած սիրոյ երաժշտութեան յուզական ուժը: Ներումի երգը, նման սիրո՛յ, *դատապարտութենէ՛ աւելի՛ կ'ընդգրկէ հաշտութեան* հրաւերը: Ներումի և սիրոյ անթառամ Բնարեգութիւնը մարդոց կը ներշնչէ վեհանձնութիւն ու յաղթանակի և սիրոյ յաւերժական խորհուրդներ:

Ներումի խօսքերը անփոխարինելի են ու գերազանցօրէն հոգիի ապրումներ կը ներշնչեն: Անոնք ուղղակի մարդուն սրտին կը խօսին, փոխանցելով նոր կեանք ու սփռելով նոր փայլ:

Ա. Խաչեցեալին ձայնին երանգները Անոր ապրումները, հայեացքները և Անոր ճշմարտութիւնները հաղորդեցին Ձին՝ դատապարտողներուն յոյս և լոյս: Լուսեղէն Յիսուսի անուշաբոյր խօսքերը չա՛յր Աստուծոյ, ին՛նաբացայտում ցոլացնող և մարդոց վրայ ներգործող հոգեհմայ մեղեդիները դարձան:

Աստուածային սիրոյ մարմնացեալ արտայայտութեան առջեւ նախանձ հոգիներ ու կեղծաւոր ստախօսներ փարացան, իսկ խղճահար աւագակն ու հեթանոս հոռմէացի խաչգամող հարիւրապետը ճանչցան տիեզերքի կարգաւորումի արտայայտչական ֆնարերգութիւնը Աստուծոյ սիրոյն, ու վկայեցին ըսելով.

«Իսկապէս արդար էր այս մարդը»--Ղուկ. ԻԳ. 47

Յիսուս Քրիստոսի Խաչելութեամբ ու մահուամբ, Անոր Հոգւոյն աւանդումով, Սատանան ու իր չար ոգիներու բանակը, կարծեցին տապալած ըլլալ Բարիին գօրութիւնը և տիրացած տիեզերքի իշխանութեան եզակի երկրագունդին: Ու այսուհետեւ կարող պիտի ըլլան տարածելու կեղծն ու սուտը, այլասերումն ու պղծութիւնը անվարան:

Կեանք բաշխող Աստուածորդին հաւատացած ու վստահած էր Ի՛ր Անձը երկնաւոր Հօր ամենատեսութեան և ամենագիտութեան: Գեթսեմանի պարտէզին մէջ վեհանձնօրէն ու ծնրադիր Ան աղօթած էր.

**«Չա՛յր իմ, եթէ կարելի է, այս բաժակը թող անցնի
ինձմէ, բայց ոչ ինչպէս ես կ'ուզեմ, այլ՝ ինչպէս դու նա»**

Մատթ. ԻԶ. 39:

Զարը փնտրած է յաջողութիւնը *կրօյ*: ուժի, գօրութեան, սուտի ու խաբէութեան մէջ, սակայն յաղթանակները կը շահուին աղօթքով և ան-ես-ական աղօթողներու ջնորհիւ: Յիսուս Քրիստոս, Իր Գեթսեմանիի աղօթքով կը հրաւիրէ մեզ յաղթել մեղքին ոչ թէ *մարդկայի՛ն* մտածումով, այլ *սրբութեամբ*: և գոհաբերելով մեր անձերը: Բոլոր յաղթութիւններէ աւելի գերազանց է անձի մը յաղթութիւնը, ի՛ր անձին դէմ, որովհետեւ որքան ծանր ըլլայ ժամանակաւոր պարտութիւնը, նոյնքան և աւելի փառայեղ է *վերջնակա՛ն* յաղթութիւնը:

Ոչ Հերովդէս, ոչ Յուդա, ոչ Կայիափա, ոչ Աննա, կամ Պիղատոս, ոչ Փարիսեցւոյ ժողովը, ոչ սադուկեցիք կրցան տիրել ու յաղթահարել ճառագայթող յաւերժաբոյր ճշմարտութիւնը: Սատանան անձամբ, անապատին մէջ, փորձեց խաբել Յիսուսը, սակայն

նորէն չեղաւ: Աէրը չպարտուիր, Լոյսը խաւարով չի ծածկուիր, մթութիւնը Լոյսը չի կրնար խաւարեցնել: Միրոյ համար գոյութիւն չունի ժամանակ, տեղ, ազգութիւն, կրօն, գաղափար, վիճակ, տարիք և գեղեցկութիւն: Կեանքի միակ իմաստութիւնը՝ *բարութիւն է և սէր* :

Եթէ սիրենք մեր թշնամին՝ իր հոգին մեզի աւելի յստակ պիտի դառնայ և որքան թափանցենք անոր մէջ, այնքան աւելի պիտի տեսնենք թէ ան իրաւունք ունի մեր գութին ու մեր սիրոյն, որովհետեւ սէրը սիրուողը թափանցիկ կ'ընէ:

Յիսուսայայտ սէրը ողջագուրեց և համակեց մարդկային հոգին և էութիւնը ու երբ Մարմնացեալ Աստուածայայտնութիւնը մեռաւ աշխարհի համար, այդ սէրն էր որ յարութիւն առաւ ու կը գոյատեւէ Ձինք սիրողներուն և Իրեն վստահողներուն սրտին մէջ: Միրոյ գորութիւնը անձնուիրութեան մէջն է: ***Աէրը նուաճումն է մահուան:***

**«Աէր անուն Յիսուս,
Միրով քով ճմլեա,
Միրս իմ քարեղէն»--Ս. Ներսէս Ծնորհալի**

Ներելու իրողութիւնը մարդկային կեանքի ամենէն *դիւրին* և ամենէն *դժուարին* հարցերէն մէկը եղած է:

Քրիստոս ճաշակեց խաչելութեան սարսազդեցիկ տառապանքը, բայց չդառնացաւ, քանի որ *ներել գիտէր* և աւագակը ընդունեց դրախտէն ներս: Յիսուս Քրիստոս ներեց մեղաւորներուն, որովհետեւ **ՄԻՐԵ՛Ն** գիտէր:

Յաւերժաւանդ Խորհուրդ Յիսուս չեկաւ աշխարհը *դատապարտելու* կամ մարդկութիւնը նզովելու . այլ Ան եկաւ **ներո՛ւմ** շնորհելու աշխարհի: Խաչին վրայ Անոր խօսքերէն առաջին երեքը *ներումի և սիրոյ* խօսքեր էին, յաջորդ երկուքը՝ *տագնապի և տառապանքի* ու վերջին երկուքը՝ *գոհութեան և յաղթանակի*:

Դարանակալ չարը սպաննեց մշտաշող Նազովրեցի Մարգարէն ստորնափարջ խաչելութեամբ: Գեհենավառ նախանձութեամբ Մանհետրինի կրօնաւորներ փակեցին ու կնքեցին գերեզմանին մուտքը: Չարալեզու ու վրէժխնդիր քրիստոնէիներ գէնքի ուժով պահակ կանգնեցան Խաչեցեալի պատարագեալ Մարմնին: Ո՛չ որպէս պաշտպան, այլ որպէս կալանք, բռնագրաւում և տիրապետում:

Ժամանակաւոր ուժի, գորութեան և անվերջ յաղթանակներու ջոպլութեան մէջ, ընչաքաղցութեան և հպարտութեան մոլուցքը խելագարեցուցած էր չարը: Սատանան չէր կրցած ծնրադրութեան

ստիպել Աստուածորդին, անապատին մէջ, այժմ կալանաւորած էր Անոր մահացած Մարմինը:

Պատերազմի մէջ վատ, յաղթութեան մէջ Բինախնդիր, բարեկամութեան մէջ մատնիչ և վրէժխնդրութեան մէջ անգութ չարը յաղթապանծ Բմծիծաղով մը կը բարեւէր իր գորավարները: Անդին ժամանակի դիֆ-դաֆը՝ Անժամանցելիին ոյժը և անսպառ սէրը հանդէպ Հօրմէն Անբաժանելիին, չարին յաղթանակը կը փոխակերպէր ամօթալի ու վերջնական պարտութեան, նահանջի և Բայֆայումի:

Ամենագէտ ու ամենատես Հայր Երկնաւոր, Իր որոշած աներկբայ ժամուն կոխկոտեց ու փշրեց Սատանային գօրութիւնն ու անոր մեղսակիցներուն զինեալ բանակները և յարուց մարդկութեան փրկարար Զօրութիւնը՝ Քրիստոս Յիսուսը՝ Ա՛ն որ *վստահած* ու յանձնուած էր Հօրը ջերմ ու անխարդախ Միրոյն, Կամֆին և Ամենագօրութեան:

Անուս, վախկոտ ու աշխարհական աշակերտներ դարձան անվեհեր առաքեալներ ու դիւցազուններ: Անոնց առաջին գրոհը եղաւ Պետրոս առաքեալի հետեւեալ հոգեշունչ յայտարարութիւնը.

«Մ՛յ Իսրայէլացիներ, լսեցէ՛ք այս խօսքերը. Յիսուս նազովրեցին, այն մարդը զոր Աստուած ներկայացուց ձեզի գօրութեամբ, նշաններով և զարմանալի գործերով, գործեր՝ զոր Աստուած անոր միջոցաւ ըրաւ ձեր մէջ, ինչպէս դուք իսկ գիտէք այդ, Աստուծոյ սահմանած խորհուրդով և կանխագիտութեամբ մատնելով զայն՝ անօրէններու ձեռքով փայտի վրայ գամեցի՛ք և սպաննեցի՛ք. ԱՄՏՈՒԱԾ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏՈՒԱԹ ԱՆՈՐ՝ լուծելով մահուան կապանքները, Բանի որ կարելի չէր որ ան բռնուէր մահէն:

Այս Յիսուսին է որ Աստուած յարութիւն տուաւ, որուն մենք ամէնքս ալ վկայ ենք: ...Աստուած է որ զինք ըրաւ Ե՛ւ Տէր, Ե՛ւ Օծեալ. ա՛յն Յիսուսը՝ զոր դուք խաչեցի՛ք.» --Գործք. Բ. 22-24, 32, 36:

Յարութեան առաւօտուն, այս սրբազան Լուսաբացին, մենք՝ հաւատացեալներս Բննարկենք մենք զմեզ, մեր յաջողութիւններն ու մեր յաղթանակները նիւթական և հոգեկան, թէ արդեօք սրտի սրբութեա՞մբ, մաքրութեա՞մբ ու սիրոյ մղումո՞վ ձեռք բերած ենք զանոնք, թէ անոնց մէջ կը գտնուին չարի մեղսակցութիւններ, նիւթապաշտական նախասիրութիւններ ու անձնական ջահախընդ-

բուժիչներ:

Այս սուրբ և պանծալի օրը մենք եւս արթննանք մեր մահա-
բունէն պաշտելու ու փառաբանելու զԱստուած որ պարտութեան
մատնեց չարին կարծեցեալ յաղթանակը, և գոչենք բարձրադաղակ
նման թերափաւատ Թովմասին, ըսելով Յիսուսի.

«Տէ՛ր Իմ ե՛ի ԱՍՏՈՒԱ՛Յ ԻՄ»:

*Քրիստոս Յարեաւ ի մեռելոց,
Որհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:*

Յուլիս 25, 1995
Թորոնթօ

ԿԱՊՈՅՏ-ԿԱՆԱԶ ԱԶՔԵՐԸ

Այս աչքե՛րը կանաչագեղ,
Այս աչքե՛րը կապուտագեղ,
Որոնց երգը այսօր լռեց աշխարհի դէմ,
Այս աչքերը, որ մայր մտան
Մահուան
Մռայլ հորիզոնին,
Ա՛լ չժգտին, ա՛լ չխօսին պիտի մարդուն,
Մինչեւ բացուին, Նորէն բացուին
Յիսուսի մեծ լուսաբացին,
Երբ մոխրացած ու փոս դարձած
Աչքերն ամէն,
Երբ խաւարած ու հողի գոյն աչքե՛րն ալ այս
Պիտի զարթնեն հողի բունէն,
Նո՛ր արեւով լեցուած զարթնեն,
Զգոցուելու համար երբեք
Ու յաւիտեան ...

--ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

ՍԷՐԻ ԹԷ ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ

Արօնական հաւատալիքներու և վարդապետութիւններու մէջ Աստուած կը ներկայացուի որպէս սիրող ու ողորմած, նաեւ դատող և պատժող Արարիչ: Ինչպէ՞ս համաչափել և զուգակշռել աստուածային վերոյիջեալ յատկանիշները:

Միթէ կարելի՞ է, որ սիրող և ողորմած Արարիչ՝ մահուան դատապարտէ մեղաւոր մը, չարագործ մը:

Նախ քան մեր խորանալը այս նիւթին շուրջ, ճանչնանք զԱստուած:

Ինչպէ՞ս կարելի է ճանչնալ *“ընթրնողութեան համար յաւէտ Անիմանալիս”* ու անսկիզբ և անժամանակ *“Անմենելի Իսկութիւն”*ը:

Պաշտելի և խնկելի Աստուած ջանացած է Իր Ադամ-մարդուն բացայայտել Ինքզինքը: Հնագոյն անցեալէն ի վեր, մարգարէներ, բանաստեղծներ և իմաստասէրներ որոնած ու պրպտած են ճանչնալու համար անճառելի և անչափելի Մեծութիւնը: Տեւական յոյսի շօշափելի Յայտնութիւնը՝ Իր տիեզերական սիրով յայտնուեցաւ Յիսուս Քրիստոսի Մարդեղութեամբ: *«Եւ քանն մարմին եղեւ և բնակեաց ի մեզ, եւ տեսաք զփառս նորա, զփառս իբրեւ զմիածնի առ ի Հօրէ, լի ջնորհօք և ճշմարտութեամբ»*, կ'ըսէ Յովհաննէս առաքեալ իր վկայութեան մէջ: Պօղոս առաքեալ ա՛լ աւելի կը շեշտէ, ըսելով.

“Քրիստոսի, որ է պատկեր աներևոյթին Աստուծոյ”

Բ. Կորնթ. Դ. 4:

Մարդեղեալ Յիսուս Քրիստոս՝ բուն ճշմարտութիւնը ճառագայթեց և դարձաւ իսկական Թարգմանը ու Մեկնաբանը տիեզերական սիրոյ, սրբութեան և դատաստանին:

Ըմբռնելու համար աստուածային սէրն ու վերջին դատաստանը և ասոնց համագործակցութիւնը և համադրեալ պատկերացումը, կարիքը ունինք հասկնալու նաեւ Աստուծոյ սրբութեան և արդարութեան գերիշխանութիւնը: Ընդհանրապէս կը խօսուի Աստուծոյ Միրոյն, Անոր դատաստանին և պատիժներուն մասին և սրբութեան յատկանիշը կը զանցառուի: Կարծէ այս առթիւ նկատել նաեւ Աստուծոյ Սրբութիւնը:

«Սրբութիւն» բառը՝ իր լման ստուգաբանութիւնը կը ստանայ Աստուծոյ խորհուրդին հետ: Աստուածային խորհուրդ գաղափարն է որ կը զանազանէ սրբազան իր մը և արարք մը ապականութենէ և

պղծութենէ: Օրինակ՝ ամուսնական կենսակցութիւնը սուրբ կը նկատուի բոլոր կրօններու և Բողոքականութիւններու մէջ, իսկ պրոնկութիւնը սրբապղծութիւն:

Սրբութեան՝ սկզբնական և գլխաւոր նշանակութիւնը կը յայտնուի անոր (սրբութեան) արտակարգ և բացառիկ գոյութեան մէջ, որ առնչութիւն ունի իրերու, էակներու, վայրերու և բառերու մէջ, որոնց դպչիլը, արտասանելը և գործածութիւնը վախ և սոսկում կ'ազդէր վաղեմի ապրողներուն վրայ:

Սրբութեան գերբնական զգացութիւնն ու տպաւորութիւնը կրօնական և բարոյական զարգացման մէջ, դարերու ընթացքին ստացաւ առաքինութեան, մաքրութեան և կատարելութեան իմաստ: Երբ կ'ըսենք "Աստուած", միանգամայն մեր միտքը կու գայ սէր, սրբութիւն և արդարութիւն: Սրբութիւնը գերագոյն ստորագելին է Աստուծոյ, որուն համար Եկեղեցին հեղինակած է ու կ'երգեհունէ «Սուրբ Սուրբ» համերգը:

Միթէ կարելի՞ է անշատել Աստուծոյ յատկանիշները՝ Սէր, սրբութիւն և արդարութիւն ու զանոնք դասել զանազան յարկաբաժիններու մէջ: Աստուածային գերիշխան սուրբ սէրը չի կրնար գործել հոն, ուր Անոր կամքին ներդաշնակութիւնը և համերաշխութիւնը չկայ: Աստուած նկարագրուած է որպէս սէր և ողորմութիւն բանաստեղծներու և գեղանկարիչներու կողմէ: Ասոնք արտայայտութիւններ են արուեստագէտ մտայղացումներու:

Մեծագոյն Արուեստագէտն ու հանճարեղ Թարգմանը Աստուծոյ, եղած է լուսահանդերձ Գալիլիացի Մարդեղեալը: Յիսուս Բրիստոս ըսաւ Իր աշակերտներուն.

«Այսօր աստե՛ն է ձեզի հետ եմ, և չճանչցար զիս, Քիլիպար՝ս ով որ զիս տեսա՛ւ՝ Հայրը տեսաւ. իսկ դու ն ինչպէ՞ս կ'ըսես թէ՛՝ ցոյց տուր մեզի Հայրը»--Յով. ԺԴ.Թ:

Անճառելի և անչափելի Մեծութիւնը, որ «անմատչելիօրէն հեռաւոր էր, դարձաւ անընդմիջելիօրէն մերձաւոր» երկնաւոր Միածնի յայտնութեամբ: Աստուածային Բրիստո՛ս Լուսաւորումն է, որ աշխարհի ճանչցուց Աստուծոյ սէրը, ողորմութիւնը, սրբութիւնը և նաեւ արդարութիւնը և դատաստանը:

Վերջին Դատաստանն ու պատիժը փոխանակ մթազնելու և նսեմացնելու աստուածային սէրն ու ողորմածութիւնը, զանոնք կ'իրականացնեն և կ'իրագործեն: Չենք կրնար զանց առնել և անտեսել Աստուծոյ արդար ցասումը հանդէպ չարին: Ոչ թէ Աստուծոյ բարկութիւնը, այլ Իր գերիշխան սէրն ու սրբութիւնն է, որ լման կ'արտայայտուին չարին չէզոքացումովը:

Ներկայ բնապաշտ հոգեբանութիւնը չարին գոյութիւնը կ'ուրանայ: Արեւմտեան երկիրներու նիւթապաշտ ապրելակերպը դրժած է դիւային ոգիներու միջամտութիւնը մարդկային մտածումին և կենցաղավարութեան մէջ: Որպէս հետեւանք՝ դատապարտեալ ոճրագործներ շուտով ազատ կ'արձակուին կրկնելու համար իրենց զագրելի եղեւնը:

Ինչպէս ուխտաւոր հաւատացեալներ եղած են Հայ ազգին մէջ, որոնք հաւատարմօրէն վկայած են ճշմարտութեան և աստուածային անճառելի սիրոյն, նոյնպէս ալ կան չարեր, որոնք իրենց ծայրայեղ անձնասիրութեան և ազահութեան համար, իրենք զիրենք նուիրած են չարին և զեղծարար վարչակարգին:

Աւետարանաշունչ Պօղոս առաքեալ կը գրէ Հռոմի Եկեղեցիին ըսելով.

«Արդարեւ, Աստուծոյ բարկութիւնը երկինքէն պիտի յայտնուի մարդոց ամբողջ ամբարշտութեան և անիրաւութեան վրայ, մարդիկ՝ որոնք ճշմարտութիւնը բռնած կը պահեն անիրաւութեամբ» -- Հռոմ. Ա.18:

Որքան պայծառ կ'երեւի այս զեղծարարութիւնը, անարդարութիւնը և անիրաւութիւնը համաշխարհային ներկայ դիւանագիտութեան և Բողաբանութեան մէջ: Առանց Բողաբագէտ ըլլալու, պարզունակ ափսորեալ մը ճանչցած է դառնութիւնը չարին և "մեծ" կոչուած ազգերու զեղծարարութիւնը:

Առանց Աստուծոյ արդար բարկութեան, դատաստանին և չարին պատժարութեան՝ Աստուած ինչպէ՞ս կրնայ յայտնել Իր սէրն ու սրբութիւնը հանդէպ այն անհամար հաւատարիմ վկաներուն և նահատակներուն: Մանաւանդ Հայաստանեայց դարաւոր Եկեղեցիի ուխտաւոր մարտիրոսներուն ու ազգին բռնագրաւուած և սուրբ արիւնով ոռոգուած հայրենաբոյր և հայրենաժառանգ հողերուն:

Աստուծոյ սէրն ու ողորմութիւնը, սրբութիւնն ու արդար բարկութիւնը զուգահեռ կ'ընդանան և կը գործեն մինչեւ վերջին դատաստանին լրումը: Եթէ ջնջուի Աստուծոյ արդար բարկութիւնը հանդէպ չարին, Իր անսպառ սիրոյն պատճառաւ, Իր սէրը՝ սուրբ և արդար սէր ըլլալէ միթէ չի դադրի՞ր:

Նայի՛նք Յիսուսի որ համաշունչ միակամութիւնն է Հօր Աստուծոյ: Դիտե՛նք Լոյսեր հագած Գալիլեացիին ողորմագին նայուածքը երբ Ան կը խօսի Սամարուհիի մը հետ Աբրահամ Նահապետին ջրհորին մօտ: Մակայն իմանա՛նք նաեւ Անոր որոտակոչ դատաստանները ու նետահարած յանդիմանութիւնները

զեղծարար փարիսեցիներուն ու կեղծանուշ օրինականներուն.

«Վա՛յ ձեզի՝ դպիրներուդ և կեղծաւոր փարիսեցիներուդ, որ երկինքի արքայութիւնը կը փակէ՛ մարդոց առջեւ. դուք չէ՛ք մտնել և մտնողներն ալ թոյլ չէ՛ք տար որ մտնեն»--Մատ. ԻԳ.13:

*«Վա՛յ ձեզի կո՛յր առաջնորդներ... յիմարներ՝ և կոյրեր՝»
Ու՛ե՛ր, իժերո՛ւ ծնուողներ, ինչպէ՛ս պիտի փախչի՛ք գեհե՛նի դատապարտութենէն»--ԻԳ.33:*

«Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, որ կը կոտորէիր մարգարէները և կը քարկոծէիր քեզի դրկուածները. քանի՛ քանի անգամ ուզեցի հաւաքել քու զաւակներդ, ինչպէ՛ս հաւը կը հաւաքէ իր ձագերը թեւերուն տակ, բայց չ'ուզեցի՛ք: Ահա ձեռ տու նը աւերակ և լքուած պիտի մնայ ձեզի»--ԻԳ.37-38:

Կեանք բաշխող վսեմութեան Մարմնացումը՝ Իր Անձին և ապրումին միջոցաւ ցոյց տուաւ աստուածային սիրոյ դիմագիծը թշուառ և հոգեպէս արկածեալ մեղաւորներուն: Ան՝ խուսափողական և երկդիմի դատապարտութիւններ չտեղացուց կեղծաւոր բարեպաշտներու վրայ: Անստուեր Լոյս Պատգամաւորը կը վճռէ Իր ամենազարհուրելի մահավճիորը կեղծաւորներուն և հոգեւո՛ր խաբեբաներուն:

«Լքուած պիտի մնայ»--ԻԳ.38-րդ համարով:

«Լքուիլ» Աստուծմէ, մահ կը նշանակէ, կորսուիլ և անյայտանալ: Ինչպէս երկինքի մոլորակներն ու աստղերը տիեզերքի ձգողական զօրութեամբ կը գոյատեւեն իրենց ջրջադարձը, նոյնպէս ալ մարդ-արարածներ՝ իրենց կեանքի կացութիւնը և դրութիւնը կը պարտին աստուածային մշտանորոգ սէ՛ր ներկայութեան: Հեռացուցէ՛ք որեւէ կեանք՝ ըլլայ ան բուսական, կենդանական կամ մարդկային՝ Աստուծոյ մշտաշող Լոյսէն, այդ կեանքը կը խամրի ու կը չփանայ:

Վերջին դատաստանին, վճռաբեկ ատեանը երբ արձակէ մահւան պատիժը, դատապարտեալները, չարութիւնը սիրող զեղծարար խաբեբաները՝ իրե՛նց ինքնորոշութեամբ, ազահութեան և անձնասիրութեան պատճառաւ լքուած պիտի ըլլան աստուածային կենարար ներկայութենէն: Չարերը իրե՛նց կամապաշտ հանգամանքին որպէս արդիւնք զրկած պիտի ըլլան իրենք զիրենք յաւիտենական կեանքէն: Աստուած չի հայթայթեր և չի ջնորհեր մարդու սրբութիւնը և բարոյական առաքինութիւնները: Այդ հոգեւոր նկարագիրը՝ աստուածային նմանութիւնը, մարդ արարած՝ ի՛նք պէտք է մշակէ՛, մարզէ՛ և ներգործէ իր հոգեկան աշխարհին մէջ: Հոգեկան և բարոյական առաքինութիւններու զանցառումը, մարդ արարածը կը վերածէ

երկոտանի վայրենաբարոյ ճիւղի, հոգ չէ, որ անոր երեւոյթը ըլլալ զգեստաւորուած, սափրուած և քաղաքակրթուած:

"Որոմնետու Առակով", Նագովրեցի Մարգարէն ոգեկան ներհայեցողութեամբ կը թափանցէ աստուածային սիրոյ, սրբութեան և արդարութեան իսկութեան ու նշանակութեան, ըսելով.

«Գուցէ որումը քաղելու ասեն, ցորենն ալ միասին արմատայնիլ ընէ՛ք: Զգեցէ՛ք որ երկուքն ալ միասին աճին մինչեւ հունձքի ժամանակ և հունձքի ասեն ես հնձուորներու ն կ'ըսեմ՝ քաղեցէ՛ք նախ այդ որումը և խորձեր կազմեցէ՛ք այրելու համար, և ապա քաղեցէ՛ք ցորենը և ամբարեցէ՛ք ջտեմարաններուս մէջ»

--Մատթ. ԺԳ.30:

Ներկայ դարաշրջանին՝ Աստուած կը սիրէ և կ'ողորմի Իր բոլոր արարածներուն: Ան անձրեւ կը դրկէ *թէ՛ քարիներու ն և թէ՛ չարերու ն*: Սակայն հունձքի ժամը (Վերջին Դատաստան)ը կայ: Վճռաբեկ ասեանը անխուսափելի է:

Ինչո՞ւ:

Որովհետեւ Աստուծոյ սէրը՝ չկրնար սուրբ և արդար ըլլալ Իր հաւատարիմներուն հանդէպ՝ չարի՛ն ու խաբեքայի՛ն գոյատեւութեամբ: Աստուած սիրած է Իր հաւատաւորները՝ զանոնք ազատագրելու համար չարէն ու կեղծաւորէն:

Որումը՝ որքա՞ն ալ ստանայ Արարչին արեւն ու անձրեւը, չկրնար ցորեն արտադրել: Որումը որո՞մ (մահ) կ'արտադրէ, և ցորենն ալ ցորեն (կեանք) կ'արտադրէ: Բոլոր անոնք, որոնք կեղծաւորութեամբ ու խաբեքայութեամբ կը ջանան ազնուական ու պատուարժան երեւիլ, պիտի չկարենան հասնիլ այդ մեծարանքին, որովհետեւ **Աստուծոյ արդարութիւնը սրբութիւնո՛վ է**:

Աստուծոյ սէրը թէ ողորմած է և թէ սրբացուցիչ: Աման մը երբ սրբացնել կ'ուզէք, զայն կը լուսի և կը մաքրէք: Անոր աղտը ամանէն կը հեռացնէք: Վիրաբուժական նշտրակ մը երբ անապական դարձնել ուզէ բժիշկը, զայն կրակէ կ'անցնէ, **կը սրբագործէ**:

Աստուած ալ՝ Իր սիրած աշխարհը երբ սրբագործել սկսի, ո՛չ թէ Իր սէրը պիտի պակսի հանդէպ Իր աշխարհին, այլ զայն պիտի մաքրէ ապականութենէ: Բոլոր մակաբոյծները (պնակալէզ գեղծարարները, որոնք ճշմարտութիւնը բռնած կը պահեն անիրաւութեամբ) պիտի այրին և սպառին, անյայտանան տիեզերքի գոյացութենէն:

«Անոր վախճանը այրուիչն է»-Եբրայեցիս 2.8:

Աստուածային սիրոյ պատասխանատուութիւնը՝ սրբութեան ու արդարութեան պահանջը կը ստիպէ: Սիրող անձ մը իր սիրածը պաշտպանելու, երաշխաւոր և յանձնառու կը զգայ ինքզինքը: Ծնողք մը թէ՛ ինամակալ է իր զաւակներուն և թէ՛ յանձնառու է անոնց ուսելիքին, հանդերձին և առողջութեան և նոյնքան ալ պաշտպան է անոնց ֆիզիքական գոյատեւութեան: Ծնողքի մը սէրը կը ստիպէ զինք պաշտպան կանգնիլ իր զաւակներուն:

Ազահութիւնը, անձնասիրութիւնը և փառամոլութիւնը, կարգ մը մարդոց, մակաբոյծերու վերածած է, որոնք կ'ապրին ուրիշները հարստահարելով, կեղեքելով և չարաշահելով: Աստուածային սրբացուցիչ բոցեղէն հուրը երբ այցելէ այս աշխարհ, չարը՝ ի՛նք ակամայ պիտի կորսուի ոչ որպէս միայն պատիժ, այլ՝ որպէս մակաբոյծ և ապարդիւն ու անարժան:

Սուրբ Աստուած, Իր հաւատացեալները և Զինք սիրողները սրբացուցած (սրբացուցիչ արարքը կատարած) պահուն, չարը, կեղծը, պիղծը և մեղաւորը ակամայ պիտի կորսուին, ո՛չ թէ Աստուած զանոնք պիտի պատժէ՛, այլ՝ անոնք, **ինքնաքերաքար** պիտի ջնջուին, այսինքն պիտի կորսուին:

Յունիս 10, 1991

Թորոնթօ